նրանք դուրս էին եկել թշնամաբար տրամադրված հայկական շրջաններից, կարճացրել հաղորդակցության գիծը, վերակազմել իրենց բարձր հրամանատարությունը, ռազմաճակատ ուղարկել գործիչների ու ժողովրդական դատարանների նոր խմբեր, վրաց ժողովրդի ուշադրությունը լարել, ամբողջապէս կենտրոնացրել ճակատի վրա:

Ընդհակառակը, հայերի համար՝ երթալով՝ ստեղծւում էր աւելի աննպաստ վիճակ: Երկու շաբաթ շարունակ առաջ շարժւող, կռիւներից դուրս չեկող, վատ հագնւած ու վատ պարենաւորւած զօրքը սաստիկ յոգնել էր, պահեստի մասերը սպառւել էին, իսկ նոր ոյժ գրեթէ չէր գալիս. կառավարությունը զբաղւած էր ուրիշ ոչ պակաս ծանր հոգսերով և պատերազմին բաւարար ուշադրություն չէր կարող դարձնել: Թիկունքից պարենաւորում ու ռազմամթերքներ չէին ստացւում. զօրքը կերակրւում էր վրացիներից առած հացով և կռւում վրացական ռազմամթերքով:

Դրությունը դժւարացնում էր և մի ուրիշ հանգամանք. քանի կռիւները տեղի էին ունենում հայկական շրջաններում, լոռեցիները՝ զէնքը ձեռներին, մասնակցում էին պատերազմական գործողություններին՝ միշտ բանակի առաջին շարքերում: Հէնց որ ամբողջ Լոռին դրաււեց, և պատերազմը սկսեց տեղափոխւել հայկական շրջաններից դուրս, լոռեցիները, մեծ մասով, հեռացան իրենց տները, և կռւի դաշտում մնացին գլխաւորապէս կանոնաւոր զօրամասերը: Այս պարագան, ի հարկէ, վատ անդրադարձաւ և մնացած զինւորների հոգեկան վիճակի վրա: Հայկական բանակը աստիճանաբար փոքրանում էր, վրացիներինը, ընդհակառակը, աւելանում էր արագօրէն: Ուժերի համեմատությունը փոխւում էր ի նպաստ թշնամու:

Դեկտ. 27-ին վրացական առաջաւոր խմբերը երևացին 2660 բարձունքի մօտ: Սարաչլուի կողմից, 3—400 վրացիներ աշխատում էին անցնել փոխ-ղնդ. Կորոլկովի ձախ թևի թիկունքը: Շարժումներ սկսւեցին և միւս ճակատներում, բայց գլխաւոր ուժերը Շուլաւերի շրջանում էին, ուր զօր. Մազնիևի զօրամասը — 3 ու կէս հազար մարդ ու 12 թնդանօթ — մեր դիրքերի թնդանօթային փոթորկայոյզ ռմբակոծումից յետոյ, ժամը 5-ին անցաւ ուժեղ յարձակման Կորոլկովի ճակատի ամբողջ լայնությամբ:

Հակառակ թշնամու ուժերի խիստ գերակշռության և մեր զօրքերի արտակարգ յոգնածության ու սակաւության, մի քանի օր անընդհատ մղեցին կատաղի կռիւներ, և մերոնք մեծ կորուստներ պատճառելով՝ յետ էին մղում բոլոր գրոհները:

Միաժամանակ վրացիները, մօտ 1000 հոգով, հետները ունենալով և Բորչալուի թուրքերի կամաւորական խմբերը, Քասումլու և Ահմամադլու գիւղերի կողմից, յարձակւեցին մեր աջ թևի վրա, ուր գործում էր փոխ-ղնդ. Իշխանեանը 6րդ գնդի 1 գումարտակով ու 2 գնդացիրով: Թէ Շուլաւերից և թէ այս կողմը, մեր զօրքերը, չստանալով ո՛չ մի օգնություն, թշնամու օր աւուր աճող ուժերի ճնշման տակ, դիմեցին Նահանջի մինչև Գեաւուր Արխ և Սիոն գիւղերը: Մեր կորուստներն էին այս կռւում. մօտ